ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/2050-21 առ "04" 08 2021թ.

Ձեր №_____ առ "___" _____ 2021թ.

«ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ-ի
տնօրեն՝ պրն Ա.Մակարյանին
E-mail: optshin@inbox.ru

[№01/078 առ 26.04.2021թ. պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի պարոն Մակարյան

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար պաշտպանիչ միջոցների (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ մարտի 15-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-37/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 17-րդ և 19-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. ապրիլի 26-ին կնքվել է թիվ 01/078 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 232560 (երկու հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 17-րդ չափաբաժնով սահմանված 12 հատ պաշտպանիչ դիմակ փոխվող ֆիլտրերով, որի ընդհանուր գինը կազմում է 216000 (երկու հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ և 19-րդ չափաբաժնով սահմանված 24 հատ ֆիլտր աէրոզոլներից պաշտպանող, որի ընդհանուր գինը կազմում է 16560 (տասնվեց հազար հինգ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, «ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարավել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի

- 2.4.1 կետի <<Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով>>:
- 2.4.2 կետի <<Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում>>,

- 2.4.4 կետի <<Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով>>:
- Հավելված N1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 կետը այն է, գնորդը իրավունք ունի՝

- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը,
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ՕՊՏՇԻՆ» ՍՊԸ-ի հետ 2021թ. ապրիլի 26-ին կնքած թիվ 01/078 պայմանագիրը 17-րդ և 19-րդ չափաբաժինների մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ Վ. Պետրոսյան
ԳԲ առաջատար մասնագետ
+374 10 28 29 60